

Հարիւրաւորներ — միմիայն Ղարաբաղէն: Չմոռնանք եւ Եփրեմը, որ ուրիշ զարաբաղցիներու հետ մասնակից էր Կուկունեանի արշաւանքին: Անթիւ եւ ուխտեալները Երեւանի, Ալեքսանդրապոլի, Կարսի ու այլ աւելի հեռաւոր շրջաններէն, զեռ միայն անոնք, որ երկիր անցան իննստուական թուականներուն, Բաֆֆիի կախարդիչ վէպերու ազդեցութեան տակ, անշուշտ, նաեւ երկրի ցնցող դէպքերու տալաւորութեան ներքոյ:

II

Մեծ մարդիկ իրենց պատմական միջավայրի ծնունդ են, անտարակոյս, սակայն անոնք ալ իրենց հերթին կը հանդիսանան ծնող ու մղիչ նոր ոյժերու, որ դուրս կը կոչեն ցեղի արդանորէն իրենց հրեղէն մարզարէական ու առաքելական բարբառով:

Այդպէս — Բաֆֆին:

Անկէ առաջ եղել էր Խրիմեան եւ Վարազի ուխտը իր «Արծուի Վասպուրականի»ով, որ տարիներ շարունակ հայրենասիրութիւն էր քարոզել, երբեմն նոյնիսկ ինքնապաշտպանութիւն ու ըմբոստացում (մասնաւորապէս Սըրուանձտեան վարդապետի գեղջկական պատկերներով): Եղել էր Մկրտիչ Պէշիկթաշեան իր «Դու գով խնդրես»ով ու այլ հայրենաշունչ երգերով: Եղել էր Միքայէլ Նալբանդեան իր «Աղատն Աստուած»ով, «Մեր Հայրենիք»ով եւ Հիւսիսափայլի ազատաշունչ յօդուածներով: Եղել էր — Last but not least — Հայր Ալիշանը իր բազմավէպեան ոտանաւորներով ու որոտընդոստ բամբերով:

Ոչ մէկը կրցաւ ստեղծել համազգային հեղեղ մը: Բաֆֆիի ժամանակը տարբեր էր, անշուշտ, Ռուսաստանը, Թիւրքիան, Բալկանները բռնուած էին աննախընթաց փոթորիկով: «Հիւանդ Մարդը» ճգնաժամային օրեր կ'ապրէր: Եւ ահա փոթորիկոտ ու տաղնապալից ժամանակը դուրս կոչեց իր մեծութեան համապատասխան մարդը հայկական միջավայրում — «Կայծեր»ի հեղինակը...

Տարբեր էին ժամանակները, բայց տարբեր էին եւ իրենք հայ պատմական դէմքերը: Ոչ մէկը անոնցմէ չէր կարող չափուիլ Բաֆֆիի հետ՝ ոչ իրրեւ վիպասան ու բանաստեղծ, ոչ իրրեւ քարոզիչ, հրապարակագիր: Տարբեր է-

ին անոնք իրենց իմացականութեան ոյժով, լեզուով ու ոճով, թափով ու սլացքով: Ալիշան, Նազարեան, Նալբանդեան, Պէշիկթաշեան, Շահազիզ եւ աւելի նորերը Ծերենց, Պատկանեան, Պոօչեան, Արծրունի եւ այլն — բանաստեղծներ, վիպասաններ ու հրապարակագիրներ — իրենց ահագին կարողութիւններով հանդերձ սովորական տաղանդներ էին*), Բաֆֆին — հանճար: Անոնք դեղնակտուց ծիծեռնակներ էին, Բաֆֆին — արծիւ, որ թեւատաբաժ եւ տիրական կը ճախրէր հայոց հորիզոններում:

Չգիտեմ՝ հայ ազգը ծնե՞ր է երբ եւ իցէ աւելի մեծ դէմք, քան փայաջուկցի այդ երբեմնի վաճառականը: Ինձի կը թուի, թէ տասընհւհնգ դարու հայկական մշակոյթի տարածութեան վրայ նա կանգնած է մեն-մենակ, անզուգական, ինչպէս Շէքսպիրը բրիտանական ազգի մէջ, Դանտէն՝ Իտալիայում, Տոլլըստոյը՝ Ռուսաստանում: Հայութիւնը ծներ է մի այլ տիրամ, նոյնպէս բնածին եւ ինքնուս (autodidacte), ինչպէս Բաֆֆին, նոյնպիսի հրեղէն, փոթորկաշունչ խառնուածքով (զէթ կեանքի առաջին շրջանում), նոյնպիսի բուն հայրենասիրութեամբ եւ տիրական հըմայքով — ծներ է ոչ հեռու պարսկական Փայաջուկէն՝ հայոց Վասպուրականում... Մկրտիչ Խրիմեանը: Բայց սա չունէր միւսի վերլուծող իմացականութիւնն ու խօլական երեւակայութիւնը, չունէր անոր ստեղծագործող կարողութիւններն ու զրիչը եւ գուցէ աւելի մեծ սիրտ մըն էր, քան մեծ միտք:

Ոչ միայն իրրեւ գեղարուեստագէտ, այլ եւ անգամ իրրեւ սոսկ հրապարակագիր, «Խենթ»ի, «Կայծեր»ի հեղինակը ամբողջ գլխով բարձր է իր ժամանակիցներէն. կը յանդգնիմ ըսել — նոյնիսկ Գրիգոր Արծրունիէն: Եւ այդ ըսելով, ի նկատի ունիմ ոչ միայն անոր յեղափոխական քարոզչութիւնը, որ կը մղէր գլխաւորապէս վէպերով, այլ եւ բազմաթիւ յօդուածներն ու տեսութիւնները «Մշակ»ի մէջ

*) Ի բաց առեալ թերեւ Նալբանդեանը, որ, անտարակոյս, ամենէն օժտուածն էր այդ շարքի մէջ: